# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 01.02.2025

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԷԿԵՆԳ) կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի տրամադրելու և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցելու պայմանները, Ծառայություններից օգտվելու և դրանց դիմաց վճարելու կարգը:

1.2. Պայմանագրի առաջարկն ուղղված է միայն ՀՀ նույնականացման քարտ ունեցող ֆիզիկական անձանց:

1.3. Պայմանագիրը հրապարակվում է ԷԿԵՆԳ-ի կայքում, և Դուք այն կարող եք ընդունել՝ միայն Պայմանագրին ամբողջությամբ միանալով:

1.4. Պայմանագրին միանալու համար Դուք պետք է տաք Ձեր համաձայնությունն էլեկտրոնային եղանակով՝ ԷԿԵՆԳ-ի կայքում սահմանված ակտիվացման գործողությունների հաջորդականությունը կատարելիս: Ակտիվացման գործողությունները կատարելը և էլեկտրոնային եղանակով Պայմանագրին համաձայնություն տալը համարվում է Պայմանագրի առաջարկի ընդունում (ակցեպտ), և այդ պահից Պայմանագիրը համարվում է Ձեր և ԷԿԵՆԳ-ի միջև կնքված:

1.5. Պայմանագրի անբաժանելի մաս են կազմում Ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմանները և հատուկ առաջարկները, որոնք ԷԿԵՆԳ-ը կարող է ժամանակ առ ժամանակ հրապարակել իր կայքում կամ հաղորդել այլ հաղորդակցության միջոցներով, ինչպես նաև Ծառայությունների գնացուցակը:

1.6. ԷԿԵՆԳ-ը կարող է Պայմանագրին միանալու համար Ձեզնից պահանջել ներկայացնել անձը հաստատող և/կամ այլ փաստաթղթեր և նույնականացնել Ձեր անձը:

1.7. ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի հրաժարվել էլեկտրոնային ստորագրության հավաստագիր տրամադրելուց կամ Ծառայություններ մատուցելուց, եթե Դուք չեք ներկայացրել պահանջվող փաստաթղթերը կամ տվյալները կամ չեք կատարել Ծառայությունների համար վճարումը կամ Ձեր ներկայացրած փաստաթղթերում և/կամ տվյալներում առկա են սխալներ կամ կեղծիքներ:

1.8. ԷԿԵՆԳ-ի կայքի միջոցով հասանելի փաստաթղթերի թղթային տարբերակները Ձեզ տրամադրվում են միայն Ձեր պահանջի դեպքում:

1.9. Ծառայությունները Ձեզ կարող են մատուցվել, եթե պայմանագրային և տեխնիկական բոլոր պահանջները Ձեր կողմից կատարվել են:

1.10. Պայմանագրին միանալով՝ Դուք հավաստում եք, որ ծանոթացել եք Պայմանագրում և ԷԿԵՆԳ-ի կայքում սահմանված՝ էլեկտրոնային ստորագրության օգտագործման պայմաններին և սահմանափակումներին:

**2. Սահմանումներ**

2.1. **Բաժանորդ** կամ **Դուք**՝ ցանկացած ֆիզիկական անձ, ում հետ կնքվել է էլեկտրոնային ստորագրության սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր:

2.2. **Էլեկտրոնային փաստաթուղթ**՝ էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկություն կամ հաղորդագրություն:

2.3. **Էլեկտրոնային թվային ստորագրություն** կամ **էլեկտրոնային ստորագրություն**՝ պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

2.4. **Էլեկտրոնային ստորագրության հավաստագիր** կամ **հավաստագիր**՝ ՀՀ կողմից թողարկված նույնականացման քարտի էլեկտրոնային կրիչի վրա զետեղված և անհատականացված էլեկտրոնային փաստաթուղթ, որը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելիությունը և ծառայում է էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց:

2.5. **Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար համեմատելով ԷԿԵՆԳ-ի կողմից թողարկված հանրային և անհատական հավաստագրերի ամբողջականությունը:

2.6. **ԷԿԵՆԳ-ի կայք**՝ ԷԿԵՆԳ-ի պաշտոնական էլեկտրոնային կայք (www.ekeng.am):

2.7. **Կողմեր**՝ ԷԿԵՆԳ-ը և Բաժանորդը համատեղ հիշատակման ժամանակ:

2.8. **Հաշվեկշիռ**՝ ժամանակի պահի դրությամբ Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց հաշվարկված վճարների և կատարված վճարումների տարբերությունը:

**3. Ծառայությունները և դրանց մատուցման կարգը**

3.1. Պայմանագրի ներքո ԷԿԵՆԳ-ը՝

3.1.1. ակտիվացնում և սպասարկում է էլեկտրոնային ստորագրության հավաստագրերը,

3.1.2. հաշվառում է իր կողմից տրամադրվող էլեկտրոնային ստորագրության հավաստագրերը և ստուգման տվյալները,

3.1.3. հավաստում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային ստորագրության հավաստագրի և էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների համապատասխանությունը և պատկանելիությունը ստորագրող անձին,
3.1.4. ապահովում է էլեկտրոնային ստորագրության և հավաստագրի եզակիությունը և պաշտպանվածությունը:
3.2. Ծառայությունների մատուցման նպատակով կատարում է Պայմանագրից բխող այլ գործողություններ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
3.3. ԷԿԵՆԳ-ը կարող է սահմանել Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովում: Այդ դեպքում ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունները մատուցելուց, եթե Դուք օգտագործում եք անհամատեղելի ծրագրային ապահովում:
3.4. ԷԿԵՆԳ-ը կարող է ժամանակ առ ժամանակ կատարել իր կողմից օգտագործվող ծրագրային ապահովման արդիականացում և, անհրաժեշտության դեպքում, Ձեզնից պահանջել թարմացնել օգտագործվող ծրագրային ապահովումը՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

**4. Վճարումներ**
4.1. Ծառայությունների համար գանձնվում է տարեկան սպասարկման վճար, որն առաջին անգամ անհրաժեշտ է վճարել էլեկտրոնային ստորագրությունն ակտիվացնելիս: Յուրաքանչյուր հաջորդ վճարումը կատարվում է նախորդ վճարումից հետո՝ ոչ ուշ, քան 12-րդ ամսվա ավարտը:
4.2. Ծառայությունների գնացուցակը հրապարակվում է ԷԿԵՆԳ-ի կայքում:
4.3. Վճարումն անհրաժեշտ է կատարել ԷԿԵՆԳ-ի կայքում նշված համապատասխան հաշվեհամարին: ԷԿԵՆԳ-ը չի կատարում սխալ հաշվեհամարին կատարված վճարումների փոխանցում ճիշտ հաշվեհամարին, և այդ դեպքում կհամարվի, որ Դուք Ծառայությունների համար չեք վճարել:
4.4. Վճարում կատարելիս անհրաժեշտ է ճշգրիտ նշել Բաժանորդի սոցիալական ապահովության քարտի համարը: Ցանկացած անձ, որը վճարում է կատարում Ձեր անունից համարվելու է Ձեր կողմից լիազորված և Ձեր անունից գործող:
4.5. Վճարումը համարվում է կատարված ԷԿԵՆԳ-ի հաշվեհամարին մուտք լինելու պահից:
4.6. ԷԿԵՆԳ-ից հարկային հաշիվ ստանալու անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է վճարումը կատարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմել ԷԿԵՆԳ-ին՝ դիմումի սկանավորված տարբերակն ուղարկելու ԷԿԵՆԳ-ի էլեկտրոնային հասցեին: Դիմումի մեջ նշվում են Բաժանորդի անունը և ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը, գրանցման հասցեն, նույնականացման քարտի համարը, վճարումը հավաստող փաստաթղթի համարը և ամսաթիվը, վճարողի

անունը և ազգանունը կամ, վճարումը կազմակերպության կողմից կատարվելու դեպքում, կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) և իրավաբանական հասցեն: ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի մերժել Բաժանորդի՝ հարկային հաշիվ ստանալու դիմումը, եթե այն չի ներկայացվել սույն կետով սահմանված կարգով և ժամկետում:

4.7. Գերավճարները համարվում են Ծառայությունների սպասարկման վճարից կանխավճար՝ հաջորդ տարիների համար նույն ծառայությունների դիմաց անակցեպտ գանձելու համար: Ընդ որում, հավաստագրի գործողությունը կարող է կասեցվել, եթե կանխավճարի գումարը չի բավարարում կասեցման պահին գործող սպասարկման վճարը հերթական տարվա համար ամբողջությամբ անակցեպտ գանձելու համար:

4.8. Ծառայությունների կասեցման կամ դադարեցման դեպքում ընթացիկ մատուցվող Ծառայությունների համար գանձված տարեկան սպասարկման վճարը վերադարձման ենթակա չէ:

**5. Ծառայությունների կասեցում և Պայմանագրի լուծում**

5.1. ԷԿԵՆԳ-ը կասեցնում կամ դադարեցնում է էլեկտրոնային ստորագրության հավաստագրի գործողությունը հետևյալ դեպքերում՝

5.1.1. Ձեր դիմումի համաձայն,

5.1.2. Ձեր պահանջով կամ իր նախաձեռնությամբ, եթե առկա են բավարար ապացույցներ այն մասին, որ այն կարող է կեղծվել կամ դրա օգտագործումը կարող է վնաս պատճառել Ձեզ կամ երրորդ անձի,

5.1.3. սահմանված չափով և կարգով վճարում չկատարելու կամ Պայմանագիրն այլ կերպ խախտելու դեպքում,

5.1.4. էլեկտրոնային ստորագրությունն անօրինական կերպով օգտագործելու դեպքում,

5.1.5. տեխնիկական խնդիրների դեպքում, ներառյալ՝ պլանային աշխատանքների, ինչպես նաև չթույլատրված մուտքերի կամ համակարգչային վիրուսների կանխարգելման նպատակով,

5.1.6. նույնականացման քարտը անվավեր ճանաչվելու կամ նոր նույնականացման քարտ ստանալու դեպքում,

5.1.7. Պայմանագրով կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

5.2. Եթե Դուք ցանկանում եք կասեցնել կամ դադարեցնել Ծառայությունների մատուցումը, ապա անհրաժեշտ է առնվազն 14 օրացուցային օր առաջ ծանուցել ԷԿԵՆԳ-ին:

5.3. Հավաստագրի գործողության դադարեցմամբ Ծառայությունների մատուցումը դադարեցվում է, և Պայմանագիրը համարվում է լուծված:

5.4. Էլեկտրոնային ստորագրության հավաստագիրը կարող է ունենալ գործողության ժամկետ, որը կարող է համընկել Ձեր նույնականացման քարտի ժամկետի հետ: Եթե էլեկտրոնային ստորագրության հավաստագիրն ունի գործողության ժամկետ, ապա այդ ժամկետը լրանալու պահից էլեկտրոնային ստորագրության հավաստագրի գործողությունը դադարեցվում է:

**6. Գաղտնիություն և անձնական տվյալներ**

6.1. Կողմերից յուրաքանչյուրն, իր հերթին, պարտավորվում է միջոցներ ձեռնարկել Պայմանագրի շրջանակում փոխանակվող տեղեկությունների և փաստաթղթերի անվտանգության և գաղտնիության պահպանման համար:

6.2. ԷԿԵՆԳ-ը չի տիրապետում Ձեր նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային ստորագրության հավաստագրերի հասանելիության համար անհրաժեշտ ծածկագրերին: Այդ ծածկագրերի պատշաճ պաշտպանությունը պետք է կատարեք Դուք, դրանք չպետք է հայտնվեն ԷԿԵՆԳ-ին կամ որևէ երրորդ անձի: Երրորդ անձանց ինտերնետային կայքերում Ձեզ անհատապես նույնականացնելու կամ որոշակի գործողություններ կատարելու կամ էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար պահանջվող հավաստագրերի հասանելիության համար մուտքագրվող ծածկագրերը մուտքագրելիս անհրաժեշտ է կիրառել միայն ԷԿԵՆԳ-ի կողմից հավաստված և թողարկված՝ հավաստագրերի ընթերցման ծրագրային ապահովումը:

6.3. Պայմանագիրը կնքելով՝ Դուք ԷԿԵՆԳ-ին համաձայնություն եք տալիս՝ մշակելու Ձեր անձնական տվյալները, ներառյալ ոչ հանրամատչելի համարվող տվյալները, ինչպես նաև դրանք փոխանցելու կամ դրանցից օգտվելու հնարավորություն տրամադրելու ՀՀ պետական մարմիններին և իր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող գործընկերներին՝ Ձեր անձնական տվյալների անվտանգության ապահովման կամ Ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով:

6.4. Անձնական տվյալների մշակումը ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ է, որը կապված է Ձեր անձնական տվյալները հավաքելու, ամրագրելու, մուտքագրելու, համակարգելու, կազմակերպելու, պահպանելու, օգտագործելու, վերափոխելու, վերականգնելու, փոխանցելու, ուղղելու, ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ՝ անկախ դրա իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելով կամ առանց դրանց):

6.5. ԷԿԵՆԳ-ն ապահովում է Ձեր անձնական տվյալների գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրության համաձայն, հաշվի առնելով սույն պայմանագրի կարգավորման առարկայի առանձնահատկությունները:

## 7. Պատասխանատվություն

7.1. ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում, եթե Դուք ոչ պատշաճ կամ անօրինական կերպով եք օգտվում Ծառայություններից կամ Ձեզ տրամադրված էլեկտրոնային ստորագրության հավաստագրերից:

7.2. Դուք պարտավորվում եք ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ պահպանելու Ծառայությունների գաղտնիությունը և կանխելու Ձեր նույնականացման քարտի և ծածկագրերի չթույլատրված օգտագործումը: Դուք եք պատասխանատվություն կրում երրորդ անձանց կողմից Ձեր նույնականացման քարտի, ծածկագրերի կամ էլեկտրոնային ստորագրության օգտագործմամբ կատարված գործողությունների համար, քանի դեռ հավաստագրի գործողությունը չի կասեցվել կամ դադարեցվել:

7.3. ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց համակարգերի համար, որտեղ Դուք օգտագործում եք Ձեր էլեկտրոնային ստորագրությունը:

7.4. Տեխնիկական անսարքությունների դեպքում, որոնք կարող են վտանգել էլեկտրոնային ստորագրության պաշտպանվածությունը կամ անհնար դարձնել դրա օգտագործումը, ԷԿԵՆԳ- ը հնարավորին շուտ կտեղեկացնի Ձեզ:

7.5. ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների մատուցման խափանումների կամ խնդիրների համար, եթե դրանք հետևանք են իր վերահսկողությունից դուրս գտվող հանգամանքների, այդ թվում, առանց սահմանափակման, ֆորս-մաժորային իրավիճակների:

7.6. ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կրած վնասների համար, որոնք առաջացել են Բաժանորդի և/կամ երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով:

7.7. Ձեր էլեկտրոնային ստորագրության օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում եք Դուք և ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում էլեկտրոնային ստորագրության օգտագործման հետևանքով Ձեր կամ երրորդ անձանց կրած վնասների համար, եթե այդ վնասը չի պատճառվել ԷԿԵՆԳ-ի մեղքով:

## 8. Ծանուցումներ

8.1. Համապատասխան տեղեկատվությունն ԷԿԵՆԳ-ի կայքում հրապարակելը համարվում է պատշաճ ծանուցում:

8.2. Պայմանագրի շրջանակում ԷԿԵՆԳ-ի ծանուցումները համարվում են պատշաճ կարգով կատարված, եթե՝

8.2.1. հրապարակվել են ԷԿԵՆԳ-ի կայքում,

8.2.2. ուղարկվել են Բաժանորդի տրամադրած էլեկտրոնային փոստի կամ Բաժանորդի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին,

8.2.3. ուղարկվել են կարճ հաղորդագրությամբ (SMS)՝ բաժանորդի տրամադրած հեռախոսահամարին,

8.2.4.ուղարկվել են փոստով՝ Բաժանորդի հաշվառման կամ նրա տրամադրած փաստացի բնակության հասցեին:
8.3. Դուք եք պատասխանատվություն կրում, եթե Ձեր կողմից տրամադրված կապի միջոցներին ուղարկված որևէ տեղեկություն, այդ թվում՝ Ձեր անձնական տվյալները, հայտնի են դառնում տվյալ կապի միջոցին հասանելիություն ունեցող երրորդ անձանց:
8.4. Պայմանագրի շրջանակում Ձեր ծանուցումները պետք է լինեն գրավոր և համարվում են պատշաճ, եթե՝
8.4.1. առձեռն հանձնվել են ԷԿԵՆԳ-ի գրասենյակում,
8.4.2.ուղարկվել են ԷԿԵՆԳ-ի գրասենյակ՝ փոստային առաքմամբ,
8.4.3. ուղարկվել են ԷԿԵՆԳ-ի էլեկտրոնային փոստի հասցեին՝ սկանավորված գրավոր նամակի տեսքով կամ ստորագրված էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, իրաբանական գործողություններ կատարելու համար գրավոր ծանուցումը պետք է ստորագրված լինի էլեկտրոնային ստորագրությամբ:
8.5. Դուք պարտավորվում եք ԷԿԵՆԳ-ին տեղեկացնել Ձեր նույնականացման տվյալների և կապի միջոցների փոփոխության մասին այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև ԷԿԵՆԳ-ի պահանջով՝ ներկայացնել հաստատող փաստաթղթեր: Եթե Դուք ԷԿԵՆԳ-ին չեք տեղեկացրել Ձեր կապի միջոցների փոփոխության մասին, ապա Ձեր չթարմացված կապի միջոցներով ուղարկված ծանուցումները կհամարվեն պատշաճ կարգով ուղարկված:

**9. Պայմանագրի փոփոխություններ**

9.1. ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի Պայմանագրում, այդ թվում՝ գնացուցակում, Ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմաններում և հատուկ առաջարկներում (եթե առկա են), միակողմանիորեն կատարել փոփոխություններ և լրացումներ՝ դրանք նախապես հրապարակելով ԷԿԵՆԳ-ի կայքում:
9.2. Պայմանագրի փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանք ԷԿԵՆԳ-ի կայքում տեղադրելուց մեկ ամիս հետո, եթե Պայմանագրի փոփոխություններով սահմանված չէ դրանց ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ: Եթե Դուք նախքան փոփոխություններն ուժի մեջ մտնելը դրանց վերաբերյալ առարկության ծանուցում չեք ներկայացնում կամ դրանց ուժի մեջ մտնելուց հետո շարունակում եք Ծառայություններից օգտվել, ապա համարվում է, որ Դուք ընդունում եք հայտարարված փոփոխությունները: Փոփոխությունները չընդունելու դեպքում Դուք իրավունք ունեք նախքան դրանց ուժի մեջ մտնելը նախնական գրավոր ծանուցմամբ լուծել Պայմանագիրը:

9.3. Ձեզ համար բարենպաստ փոփոխությունները կարող են կատարել առանց նախնական ծանուցման կամ ավելի կարճ ծանուցման ժամկետով:
9.4. Դուք եք պատասխանատու Պայմանագրի, այդ թվում՝ Ծառայությունների գնացուցակի, մատուցման լրացուցիչ պայմանների և հատուկ առաջարկների, փոփոխություններին ծանոթանալու համար:

**10. Վեճերի լուծում և օրենսդրություն**

10.1. Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը հանձնվում է ՀՀ իրավասու դատարանների լուծմանը:
10.2. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

**11. Անցումային դրույթներ**

11.1. Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, սակայն կարող է վերակնքվել նոր նույնականացման քարտ ստանալու դեպքում կամ որևէ այլ պատճառով էլեկտրոնային ստորագրության հավաստագիրը (վերա)ակտիվացնելու դեպքում: Վերակնքվելու պահից Պայմանագիրը փոխարինում է նախկինում կնքված էլեկտրոնային ստորագրության սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրին, որը համարվում է ուժը կորցրած:
11.2. Սույն պայմանագրի դրույթները տարածվում են մինչև 2025 թվականի փետրվարի 01-ը գործող Բաժանորդների վրա, իսկ 2025 թվականի փետրվարի 01-ից սկսած՝ սույն Պայմանագրով սահմանված տարեկան սպասարկման վճարի գանձման դրույթները նոր Բաժանորդների վրա չեն տարածվում, և նրանց կողմից էլեկտրոնային ստորագրության ակտիվացումը իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ առանց վճարի: